ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«17 հունվարի» 2019 թվականի № 14-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1515-Ն որոշման հանձնարարականների կատարումն ապահովելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1515-Ն որոշման հանձնարարականների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված ժամանակացույցում նշված վերահսկողներին և պատասխանատու կատարողներին՝ ապահովել ժամանակացույցում նշված հանձնարարականների կատարումը, նախապատրաստվող նյութերի սահմանված կարգով ներկայացումը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության գլխավոր քարտուղարին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

1/17/2019

VERIFIED OCSP 17 Jan 19 15:47:34 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարի
17 հունվարի N 14-Ա հրամանի

# Ժամանակացույց

ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1515-Ն որոշման (այսուհետև՝ Որոշում) հանձնարարականների կատարման

| N | Որոշման հանձնարարականը | Որոշմամբ հաստատված ժամկետը | Պատասխանատու կատարողները | Վերահսկողները | Ներկայացման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | 4.1. 2019թ. վերջին աշխատանքային օրվա ավարտին՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետև՝ նախարարություն) համակարգի բյուջետային հիմնարկների (ներառյալ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող վարկային և դրամաշնորհային ծախսային ծրագրեր իրականացնող գրասենյակների հաշիվներում ՀՀ կառավարության համաֆինանսավորման գումարների) դրամարկղերում և գանձապետական հաշիվներում ՀՀ պետական բյուջեի միջոցների առկա մնացորդները 2019թ. բյուջետային տարվա վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել ՀՀ պետական բյուջե՝ որպես 2019թ. բյուջետային տարում չօգտագործված միջոցներ: | | Հաշվապահական հաշվառման բաժին, Ջրային կոմիտե, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ, «ՀԱԷԿ» ՓԲԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ | Հ. Վարդանյան<br>Տ. Արզումանյան<br>Վ. Գևորգյան<br>Ա. Կիրակոսյան | |
| 2 | 4.2. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ՀՀ 2019թ. պետական բյուջեով նախատեսված՝ արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների ստացման նախապայմանների ապահովման համար: | | Վարկային և դրամաշնորհային ծրագրերի վարչություն, Արտաքին կապերի վարչություն, Էներգետիկայի վարչություն, Ջրային կոմիտե, Ընդերքի գործակալություն | Հ. Վարդանյան<br>Տ. Արզումանյան<br>Վ. Գևորգյան<br>Ա. Կիրակոսյան | |

| N | Որոշման հանձնարարականը | Որոշմամբ հաստատված ժամկետը | Պատասխանատու կատարողները | Վերահսկողները | Ներկայացման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 3 | 4.3. Սահմանել խիստ հսկողություն նախարարության ենթակա հիմնարկների կողմից իրականացվող ծախսերի նկատմամբ, կանխել և թույլ չտալ հաստատված նախահաշիվների առանձին ծախսային հոդվածների նկատմամբ փաստացի ծախսերի գերազանցում: | | Հաշվապահական հաշվառման բաժին (հավաք), Ջրային կոմիտե, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ | Տ. Արզումանյան Վ. Գևորգյան Ա. Կիրակոսյան | |
| 4 | 4.5 ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել Որոշման N6 հավելվածով սահմանված՝ ՀՀ 2019թ. պետական բյուջեի՝ եռամսյակային կտրվածքով ծրագրավորված եկամուտների հավաքագրման արդյունքների և դրանց՝ ծրագրային ցուցանիշներից շեղումների պատճառների մասին հաշվետվություն (ըստ առանձին եկամտատեսակների): | Մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 5-ը | Հաշվապահական հաշվառման բաժին (հավաք), Ջրային կոմիտե, Ընդերքի գործակալություն | Վ. Գևորգյան Ա. Կիրակոսյան | Մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ը |
| 5 | 4.7 ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել բացատրագիր նախարարության կողմից իրականացվող ծրագրերի և դրանց միջոցառումների գծով Որոշմամբ սահմանված բյուջետային հատկացումների եռամսյակային (աճողական) սահմանաքանակների չիրացման պատճառների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն այդ սահմանաքանակների չիրացված մասի՝ 2019թ. մնացած | | Հաշվապահական հաշվառման բաժին (հավաք), Վարկային և դրամաշնորհային ծրագրերի վարչություն, Էներգետիկայի վարչություն, | | Մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվան հաջորդող ամսվա 20-ը |

| N | Որոշման հանձնարարականը | Որոշմամբ հաստատված ժամկետը | Պատասխանատու կատարողները | Վերահսկողները | Ներկայացման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | ժամանակահատվածում իրացման գծով ձեռնարկված միջոցների կամ այդ մասի հետագա իրացման աննպատակահարմարության կամ անհնարինության մասին: | Մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվան հաջորդող ամսվա 25-ը | Ջրային կոմիտե, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ, «ՀԱԷԿ» ՓԲԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ և «Ռադիոակտիվ թափոնների մնապաշտում» ՓԲԸ | Հ. Վարդանյան<br>Տ. Արզումանյան<br>Վ. Գևորգյան<br>Ա. Կիրակոսյան | Մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվան հաջորդող ամսվա 15-ը |
| 6 | 5.1. Ապահովել ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի N 202-Ն որոշմամբ սահմանված չափով և հաստատված կարգով ու ժամկետներում շահութաբաժինների վճարումը ՀՀ 2019թ. պետական բյուջե: | | Ֆինանսատնտեսագիտական վարչություն, Ջրային կոմիտե, նախարարության ենթակայության ընկերություններ | Ա. Կիրակոսյան | |
| 7 | 5.2. Ապահովել պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս (բաժնետոմս) ունեցող ընկերությունների՝ նախորդ տարիների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում շահութաբաժինների գծով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ առաջացած պարտքերի մարումը՝ մինչև 2019թ. հուլիսի 1-ը: | | Ֆինանսատնտեսագիտական վարչություն, Ջրային կոմիտե, նախարարության ենթակայության ընկերություններ | Ա. Կիրակոսյան | |
| 8 | 18.1 ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել ոռոգման համակարգի առողջացմանն աջակցության 2019թ. ծրագիրը: | Մինչև 07.03.2019թ. | Ջրային կոմիտե | Վ. Գևորգյան | |
| 9 | 18.2 ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի հաստատմանը ներկայացնել, նախարարության պաշտոնական վեբկայքում հրապարակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին 2019թ. ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակները՝ ըստ առանձին ջրօգտագործողների ընկերությունների: | Մինչև 07.03.2019թ. | Ջրային կոմիտե, Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին | Վ. Գևորգյան<br>Ա. Կիրակոսյան | |

| N | Որոշման հանձնարարականը | Որոշմամբ հաստատված ժամկետը | Պատասխանատու կատարողները | Վերահսկողները | Ներկայացման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* |
| 10 | 21.1 Սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ Որոշման N11 և 11.1 հավելվածների՝ նախարարությանը համապատասխանող աղյուսակներում նշված արդյունքի ցուցանիշների կատարման վերաբերյալ: | | Հաշվապահական հաշվառման բաժին (հավաք), նախարարության աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներ, | | Մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվան հաջորդող ամսվա 2-ը |
| | | | Ջրային կոմիտե, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ, «ՀԱԷԿ» ՓԲԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ և «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ | Հ. Վարդանյան<br>Տ. Արզումանյան<br>Վ. Գևորգյան<br>Ա. Կիրակոսյան | Մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվան հաջորդող ամսվա 1-ը |
| 11 | 26. Սահմանել խիստ հսկողություն, կանխել և թույլ չտալ միջազգային վարկատու կազմակերպություններից, օտարերկրյա պետություններից և այլ արտաքին աղբյուրներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային միջոցների հաշվին իրագործվող նպատակային վարկային ծրագրերի գծով «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածի N 4 և N 4 հավելվածի N 1.1.1 աղյուսակներով ըստ յուրաքանչյուր նպատակային վարկային ծրագրի սահմանած ելքերի (ինչպես վարկային միջոցների, այնպես էլ ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասով) տարեկան, ինչպես նաև Որոշմամբ նախատեսված եռամսյակային (աճողական) գումարների (ներառյալ ուղղակի վճարումների և բացված հատուկ պարտավորագրերի շրջանակներում կատարվող վճարումների մասով) գերազանցում (եթե ՀՀ | | Վարկային և դրամաշնորհային ծրագրերի վարչություն, Ջրային կոմիտե, «ՀԱԷԿ» ՓԲԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ | Հ. Վարդանյան | |